ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
27 դեկտեմբերի 1997 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Հոդված 16. Պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը

Պետական գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

1.	պետական ռեգիստրում՝	
	ա) ***(ենթակետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
	բ) առևտրային կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների հաշվառման համար	բազային տուրքի 12-ապատիկի չափով
1.1	պետական ռեգիստրում գրանցման ենթակա առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների պետական գրանցման կամ նրանց առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների և պետական գրանցամատյանում գրառման ենթակա այլ տեղեկությունների փոփոխությունների հաշվառման համար, բացառությամբ այն տեղեկությունների, որոնք ինքնաշխատ կերպով արդիականանում են պետական ռեգիստրի տվյալների բազայում՝ առանց անձի հավելյալ դիմումի կամ պահանջի	բազային տուրքի տասնապատիկի չափով
1.2	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
1.3	պետական ռեգիստրում գրանցման ենթակա ոչ առևտրային կազմակերպությունների պետական գրանցման կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների հաշվառման համար, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքերի	բազային տուրքի 10-ապատիկի չափով
1.4	պետական ռեգիստրում գրանցման ենթակա ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների պետական գրանցման կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր	բազային տուրքի հնգապատիկի չափով

	խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների և պետական գրանցամատյանում գրառման ենթակա այլ տեղեկությունների փոփոխությունների հաշվառման համար, բացառությամբ այն տեղեկությունների, որոնք ինքնաշխատ կերպով արդիականանում են պետական ռեգիստրի տվյալների բազայում՝ առանց անձի հավելյալ դիմումի կամ պահանջի, ինչպես նաև սույն հոդվածի 3.1-րդ կետով սահմանված դեպքերի	
1.5	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
1.6	պետական գրանցում իրականացնող այլ մարմնի կողմից գրանցված այլ կազմակերպություններին, դրանց առանձնացված ստորաբաժանումներին պետական ռեգիստրի կողմից գրանցման (հաշվառման) վկայական տալու համար (առանց փոփոխությունների գրանցման)	բազային տուրքի չափով
1.7	հիմնարկների հաշվառման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
1.8	հիմնարկների փոփոխությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների հաշվառման համար, բացառությամբ այն տեղեկությունների, որոնք ինքնաշխատ կերպով արդիականանում են պետական ռեգիստրի տվյալների բազայում՝ առանց անձի հավելյալ դիմումի կամ պահանջի	բազային տուրքի հնգապատիկի չափով
1.9	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
1.10	պետական ռեգիստրում գրանցման ենթակա օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման նախնական գրանցման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
1.11	պետական ռեգիստրում գրանցման ենթակա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն ռեդոմիցիլացման համար	բազային տուրքի քսանապատիկի չափով
2.	անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման համար	բազային տուրքի եռապատիկի չափով
2.1	անհատ ձեռնարկատերերի տվյալների փոփոխության պետական հաշվառման համար, բացառությամբ այն տեղեկությունների, որոնք ինքնաշխատ կերպով արդիականանում են պետական ռեգիստրի տվյալների բազայում՝ առանց անձի հավելյալ դիմումի կամ պահանջի	բազային տուրքի 150 տոկոսի չափով
2.2	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
3.	համատիրությունների պետական գրանցման կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների հաշվառման համար	բազային տուրքի չափով

3.1	համատիրությունների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների պետական գրանցման կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, վերակազմակերպմամբ պայմանավորված գործունեության դադարման, գործադիր մարմնի ղեկավարի մասին տեղեկությունների և պետական գրանցամատյանում գրառման ենթակա այլ տեղեկությունների փոփոխությունների հաշվառման համար, բացառությամբ այն տեղեկությունների, որոնք ինքնաշխատ կերպով արդիականանում են պետական ռեգիստրի տվյալների բազայում՝ առանց անձի հավելյալ դիմումի կամ պահանջի	բազային տուրքի չափով
3.2	համատիրությունների կամ դրանց առանձնացված ստորաբաժանումների գրանցման (հաշվառման) վկայականի փոխարեն նորը տալու համար (առանց փոփոխությունների գրանցման)	բազային տուրքի կրկնապատիկի չափով
4.	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
4.1	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
4^{7}.	***(կետն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-109-Ն)***	
5.	բանկերը, կորպորատիվ ներդրումային ֆոնդերը, պայմանագրային ներդրումային ֆոնդերի կանոնները, ներդրումային ֆոնդի կառավարիչները, արժեթղթավորման հիմնադրամները, ապահովագրական ընկերությունները, կենսաթոշակային հիմնադրամները, գրանցելու համար	բազային տուրքի 40-պատիկի չափով
5^{1}.	ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների ընթացիկ պետական գրանցումների համար	բազային տուրքի քսանապատիկի չափով
5^{2}.	ներդրումային ընկերություններին որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ վերագրանցելու համար	բազային տուրքի քսանապատիկի չափով
6.	օտարերկրյա բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար	բազային տուրքի 40-պատիկի չափով
7.	Հայաստանի Հանրապետությունում գրանցված բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար	բազային տուրքի 20-պատիկի չափով
8.	օտարերկրյա բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների ներկայացուցչությունները գրանցելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
8^{1}.	Հայաստանի Հանրապետությունում գրանցված բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների	բազային տուրքի հնգապատիկի

	ներկայացուցչությունները գրանցելու համար	չափով
9.	*(կետն ուժը կորցրել է 08.12.05 ՀՕ-249-Ն)*	
10.	*(կետն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-27-Ն)*	
11.	*(կետն ուժը կորցրել է 13.12.03 ՀՕ-16-Ն)*	
12.	*(կետն ուժը կորցրել է 13.12.03 ՀՕ-16-Ն)*	
13.	*(կետն ուժը կորցրել է 12.06.02 ՀՕ-375-Ն)*	
14.	*(կետն ուժը կորցրել է 12.06.02 ՀՕ-375-Ն)*	
15.	*(կետն ուժը կորցրել է 11.10.00 ՀՕ-99)*	
16.	արժեթղթերի ազդագրի գրանցման համար՝	
ա)	եթե արժեթղթերի ազդագրերը գրանցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից	բազային տուրքի 50-ապատիկի չափով
բ)	եթե արժեթղթերի ազդագրերը գրանցվում են ֆոնդային բորսայի կողմից	բազային տուրքի 25-ապատիկի չափով
~~17.~~	~~ավտոմեքենայի պետական համարանիշ տալու համար~~	~~բազային տուրքի 12-պատիկի չափով~~
~~17.1.~~	~~մոտոփոխադրամիջոցների, կցորդների և կիսակցորդների հաշվառման համարանիշ տալու համար~~	~~բազային տուրքի վեցապատիկի չափով~~
17.ավտոմոբիլի հաշվառման համարանիշ (բացառությամբ տարանցիկ և ժամանակավոր համարանիշի) հատկացնելու համար	բազային տուրքի տասներկուապատիկի չափով	
17.1. մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) հաշվառման համարանիշ հատկացնելու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով».	
18.	*(կետն ուժը կորցրել է 15.11.10 ՀՕ-173-Ն)*	

19.	*(կետն ուժը կորցրել է 13.12.00 <Օ-123)*	
20.	ջրային փոխադրամիջոցները գրանցելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
21.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշներ տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
22.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
23.	տրակտորային կցանքների պետական համարանիշեր տալու համար	բազային տուրքի եռապատիկի չափով
24.	տրակտորային կցանքների պետական համարանիշեր վերականգնելու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
25.	~~դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին և միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցների պետական համարանիշներ տալու համար~~	~~բազային տուրքի 25-պատիկի չափով~~
26.	~~ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար~~	
	25.դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին և միջազգային կազմակերպություններին տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր հատկացնելու համար	բազային տուրքի քսանհինգապատիկի չափով
	26. ավտոմոբիլի, մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) հաշվառման վկայագիր տալու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
		~~բազային տուրքի վեցապատիկի չափով~~
27.	*(կետն ուժը կորցրել է 15.11.10 <Օ-173-Ն)*	
28.	տրանսպորտային միջոցների տարեկան տեխնիկական զննությունը ճանապարհային ոստիկանության մարմինների կողմից անցկացնելու	բազային տուրքի վեցապատիկի

	վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար	չափով
28.1	Լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար	բազային տուրքի 250 տոկոսի չափով
29.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տարեկան տեխնիկական զննությունն անցնելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
30.	***(կետն ուժը կորցրել է 29.11.06 ՀՕ-229-Ն)***	
31.	***(կետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***	
32.	ջրային փոխադրամիջոցները վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որևէ գործողություն կատարելու համար	բազային տուրքի չափով
33.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաները գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որևէ գործողություն կատարելու համար	բազային տուրքի 50 տոկոսի չափով
33.1	Ինքնագնաց ճանապարհաշինարարական մեքենաների և մեխանիզմների գրանցման համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
34.	***(ենթակետն ուժը կորցրել է 02.05.01 ՀՕ-181)***	
35.	դեղերի պետական գրանցման համար՝	
ա)	դեղերի համար, այդ թվում՝ նոր, վերարտադրված, կենսատեխնոլոգիական ծագման, արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական (պատվաստանյութեր, շիճուկներ, ալերգածիններ), ռադիոակտիվ, բազմաբաղադրատարր հոմեոպաթային, անասնաբուժական	բազային տուրքի 60-ապատիկի չափով
բ)	դեղերի յուրաքանչյուր դեղաչափի և (կամ) դեղաձևի համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
գ)	գրանցված դեղերի նոր ցուցում(ներ)ի համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
դ)	գրանցված դեղերի նոր համակցությունների համար	բազային տուրքի 60-ապատիկի չափով
ե)	ավանդական և բուսական դեղերի համար (այդ թվում՝ փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումք, բուժիչ թեյեր)	բազային տուրքի 10-ապատիկի

		չափով
զ)	միաբաղադրատարր հոմեոպաթային դեղերի առաջին դեղաձևի, դեղաչափի, յուրաքանչյուր հաջորդ դեղաձևի, դեղաչափի, նոր ցուցում(ներ)ի համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
է)	հիվանդությունների հարուցիչների, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկները և հակապարազիտային դեղերը, որոնք նախատեսված են մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
ը)	պետական գրանցման հավաստագրի վերաձևակերպման համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
թ)	վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 60-ապատիկի չափով
36.	գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար՝	
1.	անշարժ գույքի միավորի կամ անշարժ գույքի միավորի մաս կազմող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար, բացառությամբ օտարման կամ դատական ակտի հիման վրա սեփականության իրավունքի պետական գրանցման	բազային տուրքի չափով
2.	անշարժ գույքի միավորի կամ դրա մասի կամ անշարժ գույքի միավորի նկատմամբ բաժնեմասի (բաժնեմասերի) օտարման (առք ու վաճառքի, նվիրատվության, փոխանակման, փոխանցման) հիման վրա իրավունքի պետական գրանցում կատարելու համար, բացառությամբ պետական կամ համայնքային սեփականություն համարվող չկառուցապատված հողամասերի.	
	ա) չկառուցապատված հողամասերի, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի կամ մինչև 200 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական կամ արտադրական նշանակության շինությունների	բազային տուրքի քսանապատիկի չափով
	բ) 200 քառակուսի մետրից ավելի ներքին մակերեսով հասարակական կամ արտադրական նշանակության շինությունների	բազային տուրքի քառասնապատիկի չափով
	գ) գյուղատնտեսական նշանակության հողամասերի	բազային տուրքի չափով
	դ) այլ անշարժ գույքի	բազային տուրքի քսանապատիկի չափով
3.	պետական կամ համայնքային սեփականություն համարվող	բազային տուրքի

	չկառուցապատված հողամասերի օտարման (առք ու վաճառքի, նվիրատվության, փոխանակման) հիման վրա իրավունքի պետական գրանցում կատարելու համար	չափով
4.	անշարժ գույքի նկատմամբ իրավունքների, բացառությամբ սեփականության իրավունքի, պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի չափով
5.	անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման պետական գրանցման համար, բացառությամբ օրենքի ուժով կիրառվող սահմանափակման դեպքերի	բազային տուրքի չափով
6.	դատական ակտի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքի ծագման, փոփոխման, փոխանցման կամ դադարման պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
7.	անշարժ գույքի սեփականատիրոջ փոփոխման հիման վրա, եթե սեփականատիրոջ փոփոխությունը պայմանավորված է իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում որպես ավանդ անշարժ գույքի հանձնմամբ (ներդրմամբ, փոխանցմամբ) կամ իրավաբանական անձի վերակազմակերպմամբ (միաձուլմամբ, միացմամբ, բաժանմամբ, առանձնացմամբ, վերակազմավորմամբ) կամ իրավաբանական անձի լուծարմամբ կամ իրավաբանական անձի բաժնետոմսի (բաժնեմասի, փայի) դիմաց անշարժ գույքը բաժնետոմսի (բաժնեմասի, փայի) սեփականատիրոջը փոխանցմամբ	բազային տուրքի չափով
8.	շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի, այդ թվում՝ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքի գրավի գրանցում կատարելու համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով

Անշարժ գույքի միավորի նկատմամբ միաժամանակ տարբեր հիմքով, ինչպես նաև անշարժ գույքի միավորի նկատմամբ միաժամանակ մեկից ավելի իրավունքների պետական գրանցման դեպքում կիրառվում է դրանց համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերից առավելագույնը, իսկ պետական տուրքի դրույքաչափերը հավասար լինելու դեպքում՝ մեկ պետական տուրք:

37.	չափման միջոցների տեսակի հաստատման, ստանդարտ նմուշների հաստատման պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
38.	անշարժ հուշարձանների հետախուզության և հնագիտական պեղումների թույլտվության և պետական գրանցման համար՝	
ա)	ֆիզիկական անձանցից	բազային տուրքի կրկնապատիկի չափով
բ)	իրավաբանական անձանցից և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից	բազային տուրքի քառապատիկի չափով
39.	*(կետն ուժը կորցրել է 11.10.07 ՀՕ-205-Ն)*	
40.	Մտավոր սեփականության օբյեկտի գրանցման և այդ ապրանքների	բազային տուրքի

	ցանկացած մաքսային ռեժիմով բացթողումը կասեցնելու մասին դիմումը վերադաս մաքսային մարմնի կողմից ընդունելու համար[ՈՍՈ.]	20-ապատիկի չափով
41.	Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար՝	բազային տուրքի 120-ապատիկի չափով

Սույն հոդվածի 35-րդ և 36-րդ կետերով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

(16-րդ հոդվածը լրաց., փոփ. 19.06.98 ՀՕ-227, 28.12.98 ՀՕ-277, փոփ., խմբ., լրաց. 12.10.99 ՀՕ-4, 11.10.00 ՀՕ-99, 13.12.00 ՀՕ-123, լրաց. 15.12.00 ՀՕ-136, փոփ. 02.05.01 ՀՕ-181, խմբ., փոփ. 12.06.02 ՀՕ-375-Ն, փոփ. 13.12.03 ՀՕ-16-Ն, խմբ. 11.05.04 ՀՕ-77-Ն, փոփ. 26.05.04 ՀՕ-84-Ն, 04.10.05 ՀՕ-198-Ն, 08.12.05 ՀՕ-249-Ն, 01.06.06 ՀՕ-109-Ն, խմբ. 27.11.06 ՀՕ-201-Ն, խմբ., փոփ. 09.04.07 ՀՕ-168-Ն, փոփ., լրաց. 29.11.06 ՀՕ-229-Ն, լրաց. 05.12.06 ՀՕ-238-Ն, փոփ. 11.10.07 ՀՕ-205-Ն, լրաց. 26.05.08 ՀՕ-109-Ն, փոփ., լրաց. 15.11.10 ՀՕ-173-Ն, փոփ. 21.12.10 ՀՕ-221-Ն, փոփ., լրաց. 22.12.10 ՀՕ-283-Ն, խմբ. 01.03.11 ՀՕ-63-Ն, փոփ., լրաց. 19.03.12 ՀՕ-131-Ն, լրաց. 30.04.13 ՀՕ-44-Ն, խմբ., փոփ. 17.12.14 ՀՕ-275-Ն, խմբ. 20.10.16 ՀՕ-167-Ն, 17.05.16 ՀՕ-88-Ն, լրաց. 17.11.16 ՀՕ-208-Ն)

Հոդված 20. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը

Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1.	~~Վարորդական իրավունքի վկայական տալու համար~~	~~բազային տուրքի 12-պատիկի չափով~~
	1. Վարորդական վկայական տալու (վարորդական վկայականը փոխանակելու, կորած վարորդական վկայականի փոխարեն նորը տալու) համար	բազային տուրքի տասներկուապատիկի չափով»:
2.	***(կետն ուժը կորցրել է 15.11.10 ՀՕ-173-Ն)***	
3.	օդային և ջրային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
4.	օդային և ջրային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի 24-պատիկի չափով
5.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայական տալու համար	բազային տուրքի եռապատիկի չափով
6.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
7.	տարանցիկ համարանիշ տալու համար	բազային տուրքի եռապատիկի չափով

8.	պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունը ընդունելու համար (բացառությամբ բժշկական և դեղագործական, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության լիցենզավորման և արտոնագրային հավատարմատարների որակավորման համար քննությունների)	բազային տուրքի եռապատիկի չափով
8.1.	արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնելու որակավորման քննությանը մասնակցելու համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
9.	***(կետն ուժը կորցրել է 26.12.02 ՀՕ-502-Ն)***	
10.	փորձարկումներ կատարելու վկայագիր տալու համար	բազային տուրքի 12-պատիկի չափով
11.	համապատասխանության հավաստում կատարելու իրավունքի վկայագիր տալու համար	բազային տուրքի 24-պատիկի չափով
12.	***(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)***	
13.	***(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)***	
14.	***(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)***	
15.	անտառանյութի արտահանման սերտիֆիկատ տալու համար՝	
ա)	յուրաքանչյուր ավտոմոբիլի կամ կոնտեյների համար	բազային տուրքի 30-պատիկի չափով
բ)	յուրաքանչյուր վագոնի համար	բազային տուրքի 60-պատիկի չափով
15.1	ԱՏԳ ԱԱ 26 ապրանքային ծածկագրերին դասվող հանքաքարերի արտահանման սերտիֆիկատ տալու համար	յուրաքանչյուր անգամ արտահանվող հանքաքարի տվյալ ծավալում մետաղի պարունակության և դրա միջազգային շուկայական միջին գնի հիման վրա հաշվարկված արժեքի 3 տոկոսի չափով
15.2.	ԱՏԳ ԱԱ 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի	բազային տուրքի 80-ապատիկի չափով

	արտահանման համար (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում, ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների վրա)	
15.3.	ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000, 7902 00 000, 8002 00 000, 8101 97 000, 8102 97 000, 8103 30 000, 8104 20 000, 8105 30 000, 8106 00 100, 8107 30 000, 8108 30 000, 8109 30 000, 8110 20 000, 8111 00 190, 8112 13 000, 8112 22 000, 8112 52 000, 8112 92 200, 8113 00 400 ծածկագրերին դասվող գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի (բացառությամբ «ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) յուրաքանչյուր տոննայի արտահանման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
16.	*(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)*	
17.	*(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)*	
18.	*(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)*	
19.	*(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)*	
20.	*(կետն ուժը կորցրել է 23.03.06 ՀՕ-42-Ն)*	
21.	*(կետն ուժը կորցրել է 23.03.06 ՀՕ-42-Ն)*	
22.	*(կետն ուժը կորցրել է 23.03.06 ՀՕ-42-Ն)*	
23.	*(կետն ուժը կորցրել է 23.03.06 ՀՕ-42-Ն)*	
24.	*(կետն ուժը կորցրել է 23.03.06 ՀՕ-42-Ն)*	
25.	*(կետն ուժը կորցրել է 02.05.01 ՀՕ-181)*	
26.	իրավաբանական անձանց կողմից պայթուցիկ նյութեր ձեռք բերելու թույլտվություն տալու, տեղափոխելու և պահպանելու համար	բազային տուրքի 24-պատիկի չափով
27.	իրավաբանական անձանց կողմից թունավոր, ռադիոակտիվ և իզոտոպային նյութեր ձեռք բերելու թույլտվություն տալու, տեղափոխելու և պահպանելու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
28.	*(կետն ուժը կորցրել է 28.04.09 ՀՕ-107-Ն)*	
ա)	բյուջետային հիմնարկներից	բազային տուրքի եռապատիկի չափով

բ)	իրավաբանական անձանցից և ֆիզիկական անձանցից	բազային տուրքի վեցապատիկի չափով
29.	շինություն քանդելու և շինարարության թույլտվություն տալու համար	բազային տուրքի 18-պատիկի չափով
30.	Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
31.	«Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման տարբերակող նշանակության անվան մեջ օգտագործելու թույլտվության համար տարեկան	բազային տուրքի 600-պատիկի չափով
32.	Իրավաբանական անձանց պետական միասնական և պետական գրանցամատյաններից մեկ սուբյեկտի վերաբերյալ պետական ռեգիստրում պահվող և ինտերնետային կայքում տեղադրված ամբողջական տեղեկությունների, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենների տրամադրման համար	բազային տուրքի եռապատիկի չափով
32.1.	պետական ռեգիստրի կողմից առևտրային կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը մերժելու մասին առանձին որոշման տրամադրման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով.
33.	պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) փոխանակման, վերածևակերպման կամ կորցրած վկայականի կրկնօրինակ տալու համար (բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի)	տվյալ փաստաթուղթը (վկայականը) տալու համար դրույքաչափի կրկնապատիկը, սակայն ոչ ավելի բազային տուրքի տասնապատիկից
34.	«Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաագայի 1961 թվականի հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի 1 հոդվածով նախատեսված փաստաթղթերի վրա ապոստիլ (հավաստող մակագրություն) դնելու կամ այլ փաստաթղթերն օրինականացնելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
35.	Պետական սեփականություն համարվող բնակարանների անհատույց մասնավորեցման համար	բազային տուրքի չափով
36.	միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման անցկացման կամ հավատարմագրման վկայական տալու համար	բազային տուրքի 40-պատիկի չափով
37.	միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններին տրված պետական հավատարմագրման վկայականում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու համար	բազային տուրքի 20-պատիկի չափով

38.	միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններին պետական հավատարմագրման կորցրած վկայականի կրկնօրինակ տալու համար	բազային տուրքի 80-պատիկի չափով
38.1.	Դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման որակավորման քննությունների համար	բազային տուրքի երեսնապատիկի չափով
39.	նոտարի թեկնածուների որակավորման ստուգման համար	բազային տուրքի քսանապատիկի չափով
40.	նոտարի թարգմանչի որակավորման ստուգման համար	բազային տուրքի քսանապատիկի չափով
41.	իրավական ակտերի հաշվառման մատյանից յուրաքանչյուր իրավական ակտի վերաբերյալ տեղեկություններ տալու համար	բազային տուրքի հիսուն տոկոսի չափով
42.	երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական թույլտվություն տալու համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
42[1].	չափման միջոցների ստուգաճշտում, պետական չափագիտական հսկողության ենթակա ոլորտներում չափումների կատարման մեթոդիկաների վկայագրում իրականացնելու հավատարմագրման վկայագիր տալու համար՝	բազային տուրքի տասնապատիկի չափով:
43.	երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման ընդհանուր թույլտվություն տալու համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
43.1.	երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական և ընդհանուր թույլտվության իրավունքը հավաստող փաստաթղթի կրկնօրինակը տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
44.	Թվային տախոգրաֆի՝	
	ա) վարորդի քարտը տալու համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	բ) կազմակերպության քարտը տալու համար	բազային տուրքի 70-ապատիկի չափով
	գ) արհեստանոցի քարտը տալու համար	բազային տուրքի

		70-ապատիկի չափով
44.	անշարժ գույքի գնահատողի որակավորման վկայական տալու համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
45.	Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ կամ չվնասազերծված տարաներ փոխադրելու թույլտվություն տալու համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
46.	Հայաստանի Հանրապետության բեռնափոխադրողներին Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի անդամ պետությունների միջև անսահմանափակ քանակով երթեր կատարելու իրավունք տալու համար՝	
	ա) 6 շաբաթ ժամկետով	բազային տուրքի 5-ապատիկի չափով
	բ) 1 տարի ժամկետով	բազային տուրքի 20-ապատիկի չափով
47.	Հայաստանի Հանրապետության բեռնափոխադրողներին ավտոմոբիլային փոխադրումների մասին միջազգային համաձայնագրերով սահմանված մեկանգամյա փոխադրման իրավունք տալու համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
48.	հարկային մարմնից անհատական հաշվի քաղվածքը փաստաթղթային տեսքով տվյալ օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամից ավելի ստանալու համար	բազային տուրքի չափով
49.	Կերի օպերատորին գործունեության եզրակացություն տրամադրելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
50.	պատշաճ արտադրական գործունեության հավաստագիր տալու համար	տարեկան բազային տուրքի 30-ապատիկի չափով
51.	պատշաճ բաշխման գործունեության հավաստագիր տալու համար	տարեկան բազային տուրքի 30-ապատիկի չափով
52.	դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծման կամ արտահանման հավաստագիր տալու համար	տարեկան բազային տուրքի 5-ապատիկի չափով
53.	միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների 9-17 նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցներով մեկ երթ իրականացնելու համար՝	

	դեպի Վրաստան	բազային տուրքի 15-ապատիկի չափով
	դեպի այլ պետություններ	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	17-ից ավելի նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցներով մեկ երթ իրականացնելու համար՝	
	դեպի Վրաստան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	դեպի այլ պետություններ	բազային տուրքի 150-ապատիկի չափով
54.	Հայաստանի Հանրապետության հետ տրանսպորտի բնագավառը կանոնակարգող միջազգային համաձայնագրեր չունեցող պետությունից դեպի Հայաստանի Հանրապետություն և հակառակ ուղղությամբ այլ պետություններում հաշվառված տրանսպորտային միջոցներով միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների մեկ երթ իրականացնելու համար՝	
	9-17 նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցների համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով
	17-ից ավելի նստատեղ ունեցող տրանսպորտային միջոցների համար	բազային տուրքի 200-ապատիկի չափով